Ուստի կը պահանջեմ Ձեր արդարութենէն որ սոյն խնդիր գործադրել տաք, երկրորդ կոնդակովս նոյն հաստատելով։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 5 Յունիսի 1903 ամ
Եւ ըստ Տոմարիս ՌՃԾԲ
Ի Հայրապետութեան մերում Ծ. ամ
ՅԱրարատեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 734

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յատուկ խնդրում եմ թոյլ տալ ներկայ երկտողս «Լումայ»-ում տպելու։

Ներկայ տարուայ «Նոր-Դար»-ի № 50-ում մի յօդուած էր տպուած «Գրական երեկոյ» վերնագրով որ կրում էր «Երևանեան» ստորագրութիւնը։

Այդ յօդուածը մեծ աղմուկ հանեց Երևանում և չը գիտեմ ինչու մի քանի չահագրգռուած պարոններ յօդուածի հեղինակը ինձ համարեցին և տակաւին յամառ կերպով համարում են։ Սպառնալիքներն ու բամբասանքը աւելի ևս մեծ չափեր ընդունեցին մանաւանդ վերջերս, երբ նոքա տեսան, որ իմ հերքումը մինչև այժմ չը տպուեց «Նոր-Դար»-ում, որ գրել էի տարուայ Մարտի 19-ին և կրկնել ու երեքկնել։

Որովհետև իմ հերքումը մինչև այժմ լոյս չը տեսաւ «Նոր-Դար»-ում, ստիպուած եմ դիմել «Լումայ»-ի խմբագրութեան և յատկապէս խնդրել տալու սորա հետ ուղարկածս նոյն երկտող հերքումը ի խոյս ապագայ անախորժութեանց։

«Նոր-Դար»-ի յարգելի խմբագրութեան, Խնդրում եմ «Նոր-Դար»-ի մերձակայ համարներից մէկում տպագրել ներկայ երկտողս, որով յայտնում եմ, թէ իմ գրչին չէ պատկանում «Երևանեան» ստորագրութեամբ «Նոր-Դար»-ի № 50 ի բանաստեղծական յօդուածը՝ «Գրական երեկոյ» վերնագրով։

Մակար Տէր-Սարգսեանց